

V.M. KHACHATRYAN

APPLICATION OF FOREIGN WORDS IN THE 14-TH CENTURY
COLOPHONS

The foreign words registered in the 14-th century colophons have been considered. These words have been recognized at all the stages of development of the Armenian language.

Keywords: manuscript, colophon, foreign words, borrowing, copier.

ՀՏԴ 82-3:821.19

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԽՆԴՐԱՅԻՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ՇԱՐԱՀԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ
(ըստ 20-րդ դ. 50-60-ական թթ. հայ արձակից քաղված օրինակների)

Շարահարությամբ կապակցված խնդրային ստորադասական նախադասությունները, որոնք առավելապես բնորոշ են խոսակցական լեզվին, իրենց արտահայտությունն են գտել գեղարվեստական խոսքում՝ սկսած 20-րդ դարի 50-60-ական թվականներից: Նշված շրջանի արձակից բերված օրինակների վերլուծությունը տեսանելի է դարձնում նմանատիպ կառույցների իմաստաքերականական առանձնահատկությունները և կարող է նպաստել արդի հայերենում դրանց նորովի դրսևորումների ուսումնասիրությանը:

Առանցքային բառեր. բարդ ստորադասական նախադասություն, խնդրային ստորադասություն, կապակցման եղանակներ, շարահարական կառույցներ, հնչերանգ:

Խնդրային ստորադասական նախադասության բաղադրիչները միմյանց հետ կապակցվում են ձևային և իմաստային այնպիսի եղանակներով, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են բարդ ստորադասական նախադասության բոլոր տեսակներին, այսինքն՝ գերադաս և ստորադաս նախադասությունները միմյանց կապակցվում են 2 եղանակով՝ **սպասարկու բառերով** և **առանց սպասարկու բառերի**: Ուստի, ըստ կապակցման եղանակների, դրանք լինում են **զոդվածական** (կամ **նշութավոր**) և **շարահարական** (կամ **աննշույթ**):

Չնայած լեզվաբանության մեջ **շարահարական** կառույցները համարվել են ժողովրդական լեզվին հատուկ «խոսքերի կապակցության ամենապարզ սկզբնական ձև» [1, 609], սակայն դրանց ստորադասական տարբերակների վերլուծության մեջ առկա են տարակարծիք մոտեցումներ:

Շարահարական կամ աննշույթ կառույցներում ստորադասությունն ընկալվում է **հնչերանգով, իմաստով, շարահյուսական համանիշներներով** (զեղչված նշույթի վերականգնում) կամ բաղադրիչների **բայ-սպորոգյալների եղանակաժամանակային կարգերի** հարաբերությամբ:

Ստորադասական հարաբերության **հնչերանգային** տարբերակումը կատարվում է նախադասության արտաբերման ձայնային ելևէջման միջոցով: Շարահարական կառույցում այդ ելևէջման բարձրակետը կախված է կառույցի բաղադրիչների դասավորությունից: Այս առումով տարբերակվում է հնչերանգի երկու տեսակ՝ **նախազգուշական** և **բացադրական**:

Նախազգուշական հնչերանգը հատուկ է առաջադաս կախյալ բաղադրիչով կառույցներին, որոնց արտաբերման ժամանակ ձայնը բարձրանում է, պահպանվում գլխավորի սկզբում, ապա աստիճանաբար իջնում:

Օրինակ. *Ինչ էի գրում ես այն ժամանակ*, հիմա չեմ հիշում [2, 295]: *Այս մարդը կուշտ է*, մտածում եմ ես [ու նայում սեղանին հակված մարդուն...] [3, 132]:

Բացատրական հնչերանգ ունեն վերջադաս կախյալ բաղադրիչով կառույցները, որոնք արտաբերելիս գլխավոր բաղադրիչի վերջում ձայնն իջնում է և փոքր դադարից հետո կախյալի սկզբում կտրուկ բարձրանում:

Օրինակ. Ասում են՝ *մենք հիմա նոր ականաններ ունենք* [3, 236]: Խոսք եմ տալիս՝ *կգամ* [4, 135]: Հիշում եմ, *դեռ վեց-յոթ տարեկան էի*, չգիտեմ *ինչից հիվանդացան աչքերս*, ինձ խաբելով տարան բժշկի մոտ [5, 243]:

Եթե բանավոր խոսքում հստակ է հնչերանգային տարբերակումը, ապա նույնը չի կարելի ասել գրավոր խոսքի մասին: Այստեղ ստորադասությունն ընկալվում է ավելի շատ **կետադրման** գործառույթի միջոցով, որը և ծառայում է կառույցի իմաստային հստակեցմանը:

Օրինակ. Իսկ դու հիմա պատմիր՝ *ինչպես անցկացրիր այս հինգ տարին* [6, 14]: Հաճախ չէր կարողանում որոշել՝ *ով ուր է տանում իր շուշանները* [7, 7]: Ասում էի՝ *ռազմաճակատում պետք է ընդունվել պարտիայի մեջ* [3, 9]: Տեսնու՛մ եք՝ *էն պար եկողը պրիստավն է, էն կարմիր փափախավորն էլ Դուքանչի Օսեփը* [8, 24]:

Սովորաբար կախյալ շարահարությամբ նախադասությունները գլխավորին կապակցող բառերը կամ **զեղչված են** (ա) կամ **փոխարինված են այլ բառով** (բ) կամ էլ **խապառ բացակայում են** (գ):

Օրինակ. ա) [Կինը զարմանքով դուրս է գալիս տնից,] տեսնում (է, որ) իր մարդը բաղրիջանի փոխարեն մի կանաչ չալմայով, սև խալաթով մոլլա է բերել [8, 200]: Գիտեր (, թե) *ու՛մ ցանկապատի տակով անցնելիս ձեռքերը գրպաններից հանի...* [9, 210]:

բ) Վազիր, *ասա, թող* մի քանի համազարկ տան [3, 237]: Ընկերներիդ խնդրիր, *թող* փոխարինեն [5, 202]:

գ) [Ես հիմա խոսում եմ և] չգիտեմ հասկանու՞մ ես ինձ, թե՞ չէ [10, 135]: [Գնա քո Մշուդ ձկները բռնե,] տեսնեմ *հլա ինչպես կբռնես* [11, 256]:

Խնդրային ստորադասությամբ շարահարական շատ նախադասություններ **շարահյուսական համանիշներ** են իրենց համապատասխան զոդվածավոր կառույցների համար: Դա հատկապես ցայտուն է արտահայտված այն կառույցներում, որտեղ նշույթը զեղչված է և հնարավոր է վերականգնել:

Բերված օրինակներից ակնհայտ է, որ ստորադասական հարաբերությունները զոդվածավոր կառույցներում ավելի հստակ են ու որոշակի. դրանք արտահայտվում են թե՛ ձևային, թե՛ իմաստային առումով: Մինչդեռ շարահարական կառույցներում ձևային նշույթի բացակայության պատճառով ստորադասական հարաբերությունը հաճախ դառնում է աղոտ, անորոշ և երբեմն ընկալելի է դառնում միայն իմաստային դաշտում:

Ստորադասական հարաբերության **իմաստային ընկալման** մեջ էական դեր ունեն նաև բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների **եղանակաժամանակային բնութագրերը**:

Օրինակ. Խնդրում է *թոյլ տամ*], որ գա ինձ մոտ]... [4, 9]: Գիտեի, նրան առաջարկել էին սպանել ինձ... [12, 74]:

Այս կառույցներից առաջինում բացակայում է կետադրությունը, երկրորդում՝ բուֆի փոխարեն գործածվել է ստորակետ: Երկու դեպքում էլ թուլանում է հնչերանգային կողմնորոշումը. առաջինի մեջ (*Խնդրում է թոյլ տամ*) պահպանված չէ բարդ նախադասության բաղադրիչների տրոհման կանոնակարգը, երկրորդում (*Գիտեի, նրան առաջարկել էին...*) կարող է շփոթ առաջանալ համադասական և ստորադասական հարաբերությունների տարբերակման հարցում: Չնայած դրան, ընդգծված բայերի եղանակաժամանակային համադրություններն օգնում են կողմնորոշվելու՝ ճիշտ ընկալելու խնդրային ստորադասությունը: Համոզվելու համար բավական է փոխել բաղադրիչների բայերի եղանակաժամանակային պատկերը: Օրինակ՝ «*խնդրում է թոյլ տամ*» կառույցում «*խնդրում է*» բաղադրիչը գերադասն է, իսկ «*թոյլ տամ*»-ը՝ ուղիղ խնդիր: Եթե փորձենք փոխել կախյալի ստորոգյալի եղանակաժամանակային կարգը (*թոյլ եմ տալիս*), ապա «*խնդրում է թոյլ եմ տալիս*» տարբերակում փոխվում են ոչ միայն բաղադրիչների դերերը, այլև պաշտոնները. «*թոյլ եմ տալիս*» բաղադրիչը դառնում է գերադաս, «*խնդրում է*» բաղադրիչը՝ կախյալ նախադասություն, որը կարող է ընկալվել և՛ որպես պայմանի (*եթե խնդրում է*), և՛ որպես հիմունքի (*քանի որ խնդրում է*) պարագա: Ուստի, կախված հնչերանգից, վերջինս կարող է ընկալվել նաև որպես բարդ համադասական նախադասություն:

Խնդրային շարահարական բարդ նախադասության կախյալները բնույթով գերազանցապես **ուղիղ խնդիր** են, որոնք մեծմասամբ լրացնում են գերադասի այնպիսի խնդրառու բայերի, ինչպիսիք են՝ **ասել, գիտենալ, տեսնել, հասկանալ, իմանալ, որոշել, մտածել, լսել, կարծել, հարցնել, հիշել, զգալ, ուզել** և այլն:

Մեծ գործածություն ունեն հատկապես **ասացական բայերը**, քանի որ դրանք լավագույն միջոցն են հակիրճ ձևով հաղորդելու ուրիշի խոսքը՝ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի:

Օրինակ. *Ասում են՝* ամենից լավ մագաղաթն ստացվում է խալավոր գառների մորթիներից [13, 139]: *Խնդրում է* թույլ տամ, որ գա ինձ մոտ, *ասում է*՝ ուզում եմ, որ նորից հայերեն հայիոյես [4, 9]: [Քեռիս հանդիմանանքով նայում է Ավետին, իսկ] նա չգիտես ինչու հանկարծ *հարցնում է*՝ Իվանի նոր առած գառները լա՞վն էին [11, 127]:

Հաճախադեպ են նաև այնպիսի կառույցները, որոնց մեջ աննշույթ կախյալ նախադասությունները դառնում են հասկացական-իմացական բայերի լրացումներ՝ անդրադարձնելով դրանց իմաստային և ոճական բազմերանգությունը:

Օրինակ. [Ես կանգնած էի անշարժ և] *չգիտեի* ինչ անեի [12, 81]: [Ամբողջ գիշեր գնում ենք ու] *չգիտեմ* դեռ ինչքան ենք գնալու [7, 26]: *Հասկանում եք* ինչ նշանակություն ունի թևավորների նոր տեսակներ ընտելացնելը [14, 184]:

Շատ են **հարցական** բնույթի նախադասությունները: Հարցը երբեմն տրվում է ուղղակի իմաստով (ա), երբեմն էլ կրում է ճարտասանական բնույթ և ավելի շատ հաստատում է նշանակում (բ):

Օրինակ. ա) Դե ձեզ եմ հարցնում, ինչպե՞ս է հարմար, հին շինարար վարպետները գնան նոր քաղաք շինելու՞, թե՞ ձեզ պես խամ երեխեքը [14, 152]:

բ) Պատկերացնո՞ւմ եք, մեծ պապիկը ծիծաղեց [11, 68]: Ասացե՛ք, էլ ես ինչպե՞ս օգնեմ քրոջս [5, 202]:

Նմանատիպ կառույցներում, որտեղ ընդգծված է հարցումը, գործածական են հատկապես **տեսնել, լսել, կարծել** և նման խնդրառու բայերը:

Օրինակ. *Տեսնում ես* չէ՞, ուզում եմ աշխատել՝ չի լինում [15, 222]: Չե՞ս լսել, ասում են՝ աղքատ ու հպարտ [8, 27]: Իսկ դու ի՞նչ *ես կարծում*, մենք կհանձնվե՞նք [3, 119]:

Կամ հակառակը՝ հարցը շեշտված չէ, բայց կա իմաստային հարցում, որն արտահայտում է տարակուսանք, զարմանք, երկբայություն և նման այլ նրբերանգներ: Այս դեպքերում ավելի հաճախ գործածվում են **գիտենալ, հասկանալ, իմանալ** և նման այլ հասկացական-իմացական խնդրառու բայեր:

Օրինակ. Քաղաք է, թե գյուղ՝ *չգիտեմ*, այնտեղից ածուխ պետք է վերցնել [3, 42]: Չեմ հասկանում՝ ինչ է կատարվում այս երկրում [5, 206]: *Հասկանում եք* ինչ նշանակություն ունի թևավորների նոր տեսակներ ընտելացնելը [14, 184]:

Հանդիպում են նաև անջատման (ա) և վերաբերության (բ) անուղղակի խնդիրների իմաստով շարահարական կախյալներ:

Օրինակ. ա) Արփիկ, վախենամ *քո ձմերուկը մածնի գոյն ունենա* [16, 256]:
Նա վախեցավ՝ *չլինի՞ թե մեկը հանկարծ իրեն բռնի այդ նկարներին նայելիս* [5, 228]: Ես վախենում եմ՝ *այդ բժիշկները զորացրեն նրան* [3, 173]:

բ) [Հորես կրտսերը խորքի փոքրիկ դռնից առաջնորդում էր կից խուցը...և] վառարանի կրակը բորբոքելու հետ հարց ու փորձ անում օտարականներին՝ *ո՞վ են, ուստից կուգան և ուր կերթան* [9, 162]: Խոսում էինք այդ մասին, (զեղչ.՝ *որ*) եթե չշտապենք ուղևորվել, հիվանդները կմեռնեն [17, 121]:

Շարահարական կառույցներն ավելի գործածական են բանավոր խոսքում, որտեղ դրանցում եղած ստորադասությունը բացարձակապես ընկալելի է հնչե-րանգային արտաբերման հարուստ նրբերանգների շնորհիվ: Մինչդեռ գրավոր խոսքում դրանց իմաստաբերական հատկանիշների տարբերակումը դառնում է խիստ հայեցողական, մանավանդ այն դեպքերում, երբ բացակայում է կետադրական հստակ տրոհումը:

Գեղարվեստական խոսքում շարահարական կառույցների լայն կիրառու-թյունն առավելապես հատկանշական է **կերպարային խոսքին**:

Օրինակ. Մի տեսնեմ *որտե՞ղդ է վնասվել* [14, 212]: [Ես կոպտեցի նրան,] չեմ հիշում *ի՞նչ ասացի*, բայց նա լցվեց ու գնաց [6, 16]: Ասում են *շատ հան-գիստ փողա է եղել* [5, 211]: Ա՛խ, չգիտեմ, *դուք ինչու՞ եք ուզում նստել փակ օթա-խում, դեղնել* [15, 222]: Արի՛, արի՛, աստծու եթիմ, արի տես *ինչ հողն է եկել գլխիդ* [16, 28]: Ես էլ մտածում եմ՝ *ու՛մ դիմեմ, ի՞նչ անեմ* [5, 210]: [Թագավորին թախ-տից գցեցին,] ասինք *լավ օր պիտի տեսնենք*, համա էս վերվարածները ջրի երես ելան [11, 256]:

Առկա են նաև **հեղինակային խոսքի** շարահարություններ: Դրանց մի մասը հիմնականում նպատակային է, ոճավորում է հեղինակ-պատմողի խոսքը /ա/, երբեմն էլ պատահական կամ ինքնանպատակ /բ/:

Օրինակ. ա/ Նա վախեցավ՝ *չլինի՞ թե մեկը հանկարծ իրեն բռնի այդ նկար-ներին նայելիս* [5, 228]: [Հորեղբայր Բարսեղի կինն էլ թեև ոտաբոբիկ, բայց կզնար, եթե] իմանար *ու՛ր փարան հորեղբայր Բարսեղին...* [9, 214]:

բ/ [Եվ մարդը կարծես զգաց այդ լռությունը, վախեցավ,] **[թե]** *ինչու՞ իմանար ուրիշի կյանքը*, թեկուզև սիրել է այդ ուրիշին մի ժամանակ [7, 68]: Խոսում էինք այդ մասին, **[որ]** եթե չշտապենք ուղևորվել, *հիվանդները կմեռնեն* [17, 121]:

Դիտարկելով նշված օրինակները՝ առաջին հայացքից կարելի է մտածել, թե հեղինակային խոսքում գործածված շարահարությունները գրավոր լեզվի համար հակահամակարգային երևույթներ են: Իսկ «լեզուն ունի դիմադրության, իր էությանը խորթ տարրերն արտամղելու ուժ» [18, 169]: Սակայն, պետք է նկա-

տել, որ լեզուն նաև քմահաճ է. երբեմն պահպանում է առավել արդյունավետը, գործնականը, նրբաճաշակը, երբեմն էլ հակառակը: Եվ եթե արդի գեղարվեստական (արձակ, պոեզիա, հրապարակախոսություն) խոսքում շարահարական կառույցները շարունակում են ոչ միայն գործածվել, այլև դուրս մղել զոդվածականների որոշ տեսակներ, ապա արդեն պետք է փոխվեն նաև մոտեցումները, մանավանդ որ 20-րդ դարավերջի և առավել ևս 21-րդ դարասկզբի հայ գրականության լեզուն գալիս է հաստատելու, որ տեղեկատվական հոսքերի հարաճուն ծավալների պահանջով ակտիվանում է նաև լեզվական կառույցների հակիրճության միտումը:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ չնայած շարահարական կառույցները երկար ժամանակ համարվել են լեզվական նորմից շեղումներ, սակայն, քանի որ լեզուն չի սիրում զսպաշապիկներ, դրանք ևս վավերացվում են գեղարվեստական խոսքով և շարունակում ցուցաբերել աճման միտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Ե., «Միտք», 1965, 700 էջ:
2. **Մահարի Գ.**, Երիտասարդության սեմին, Ե., Հայպետհրատ, 1956, 667 էջ:
3. **Հովսեփյան Բ.**, Սերմնացանները չվերադարձան, Ե., 1962, Հայպետհրատ, 291 էջ:
4. **Արամյան Ռ.**, Ռուբինյան եղբայրները (վեպ), Ե., Հայպետհրատ, 1954, 256 էջ:
5. **Սևունց Գ.**, Երկեր 5 հատորով: Հ. 2, Թեհրան, գ. 2, Ե., 1963, 599 էջ:
6. **Ավագյան Ա.**, Վաղը, Ե., Հայպետհրատ, 1951, 236 էջ:
7. **Պետրոսյան Վ.**, Վերջին գիշերը, Ե., Հայպետհրատ, 1959, 228 էջ:
8. **Խանզադյան Ս.**, Ավանդատուն, Ե., Սովետական գրող, 1986, 288 էջ
9. **Սահինյան Ա.**, Ընտիր երկեր: Հ. 3: Ծարավ, Ե., Սովետական գրող, 1988, 576 էջ:
10. **Թաթևկյան Շ.**, Նրա ճանապարհը: Գիրք 2-րդ, Ե., Հայպետհրատ, 1958, 475 էջ:
11. **Աղավնի, Շիրակ, Ե.**, Հայպետհրատ, 1957, 516 էջ:
12. **Արամյան Վ.**, Մարդու սերը, Ե., Հայպետհրատ, 1962, 180 էջ:
13. **Խեչումյան Վ.**, Գիրք պանդխտության, Ե., Հայպետհրատ, 1959, 288 էջ:
14. **Անանյան Վ.**, Սևանի ափին, Ե., Հայպետհրատ, 1953, 526 էջ:
15. **Այվազյան Ս.**, Լեռնցիներ, Ե., Հայպետհրատ, 1955, 455 էջ:
16. **Հրաչյան Խ.**, Ուրցի Մարան, Ե., Հայպետհրատ, 1961, 336 էջ:
17. **Ալաջաջյան Ստ.**, Ե., Սովետական գրող, 1976, 296 էջ:
18. **Աղաբաբյան Ս.**, Դասականներ և ժամանակակիցներ, Ե., Սովետական գրող, 1986, 475 էջ:

Լ.Ս. ԱՅՐԱՔԵՅԱՆ

**БЕССОЮЗНЫЕ КОНСТРУКЦИИ ИЗЪЯСНИТЕЛЬНЫХ
ПРИДАТОЧНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ
(на примере армянской прозы 50–60-х годов XX века)**

Бессоюзно связанные изъяснительные придаточные предложения, наиболее характерные для разговорного языка, нашли свое выражение в художественной речи, начиная с 50-60-х годов XX века. Анализ примеров из прозы указанного периода делает наглядными смыслограмматические особенности подобных конструкций и может способствовать изучению их проявлений по-новому в современном армянском языке.

Ключевые слова: сложноподчиненное предложение, изъяснительное придаточное, типы связи, бессоюзные конструкции, интонация.

L.U. HAYRAPETYAN

**ASYNDETIC OBJECT CLAUSES IN LITERARY SPEECH
(on the example of Armenian prose of the 50-60s of the 20th century)**

Asyndetic object clauses, which are most typically used in the spoken language, appeared in literary speech beginning from the 50-60s of the 20th century. The analysis of the examples from the given period makes the semantic and grammatical characteristics of such structures obvious and can contribute to the study of the new manifestations of the latter in Modern Armenian.

Keywords: complex sentence, object clause, types of sentence connectors, asyndetic structures, intonation.

ՀՏԴ 81'367.6

Հ.Լ. ԶՈՐՅԱՆ

**ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ ՈՉ ՃԻՇՏ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ**

Դիտարկվում են գոյականական բառակապակցություններն այլ խոսքի մասերով ծավալելու դեպքում բանավոր խոսքում ի հայտ եկող աղավաղումները և դրանցից խուսափելու ուղիները:

Առանցքային բառեր. բառակապակցություն, գերադաս անդամ, ծավալում, լրացում:

Լեզվում բառերն իրար նկատմամբ գտնվում են որոշակի հարաբերության մեջ, որը խոսողության ընթացքում դրսևորվում է բառերի կապակցությամբ:

Ըստ ռուս լեզվաբան Վինոգրադովի՝ «բառակապակցությունը շարահյուսական մի ամբողջություն է՝ առնվազն երկու բառի կապակցություն, որն արտահայտում է մի ամբողջական, թեև անդամազատ հասկացություն» [1]: